

891.99  
Q - 44



3066-41

891-99 | Chayuch  
Ch-44 | Pyanjich

4643      13/0181

891.99  
Q - 44

Φ 0.0 0.5 0.6 0.4 1.8 0.0 0.8 0.6 0.7 0.0 1.1 1.4 5 119 NOV 2010

891.99  
Q-44

23 JUN 2005

## Դ. ԱԴՐԵՆ

14

# ՔԵՐՈՐՈՂԼԻ

ԱՐԿԱԾՆԵՐ

## ՔԵՐՈՂԻՆՈՒ ԿԵԱՆՔԻՑ

- ՔԵՐՈՉԼԻՆ ԿԱԼԱՆԱԽՈՐ
  - ՔԵՐՈՉԼԻՆ ԶԱՂԱՑՊԱՆ
  - ՔԵՐՈՉԼՈՒ ԹՈՒՐԸ

Տպագրիչ-Հրատարակիչ Վ.Ս.Դ.ԲՆԱԿ Մ. ԹԵՐԵՍ

4. 901.80

1924

06.02.2013

18724

2025 RELEASE UNDER E.O. 14176



3066

41



የተዚረዘሩት

## ՔԵՈՐԾՂԼԻՆ ԿԱԼԱՆԱԻՈՐ

---

Քեօրօղին գող չէր և ոչ աւազակ, այլ մի  
խքնագլուխ իշխան, իսկ այդ անկախութեանը  
հասել էր նա իր անվեհերութիւնովը և քաջա-  
գործութիւններովը։ Նա չէր յափշտակում և կո-  
ղոպտում, այլ հարկ ու մաքս էր առնում և չը-  
տւողներին անխնայ պատժում։ Բայց իրանի թա-  
գաւորը նրան համարում էր աւաղակ. այսպէս  
էին ճանաչում նրան և սուլթաններն ու խալիֆ-  
ները, որոնց կարծիքը Քեօրօղլու համար նշանա-  
կութիւն չունէր. նա այսպէս էր դատում—

«Եթէ հարկ առնելը մեղք է, ինչո՞ւ իրանք  
առնում են։ Եթէ հնազանդելը լաւ բան է, ին-  
չո՞ւ իրանք ինձ չեն հնազանդում։ Իրանք զոռով  
ու բռնութեամբ են տիրում աշխարհին։ Ես էլ  
իրանց պէս կը վարւեմ։ Այդ բարրարոս աւա-  
զակները իրանց աչքի գերանը չեն տեսնում,  
բայց համարձակում են իմ աչքումը շիւղ գտնել։  
Իրանք իրանց աւազակ չեն համարում, չը  
նայած, որ նոյն իսկ Աստուծու փառքն են յափշ-  
տակում, իսկ ինձ՝ Աստուծու ամենախոնարհ ծա-  
ռայիս՝ համարում են աւազակ»։

— 6 —

Այսպէս էր դատում Քեօրօղին, իբրև բնութեան պարզ որդի, որի գլուխը լցւած չէր զանազան կանխակալ կարծիքներով:

Բայց ամենայն օր դանդատ ու բողոք էր, որ անընդհատ հասնում էր իրանի թագաւորին, որին հանդիմանում էլ էին, թէ՝ եթէ դու ես մեր թագաւորը, ազատիր մեզ Քեօրօղլու ձեռից, որ քեզ ծառայենք, իսկ եթէ ոչ՝ մենք կամայ ակամայ պիտի Քեօրօղլուն հպատակւենք, նրան ծառայենք: Եւ ահա ինչ էին ասում իրանց դանդատներում Քեօրօղլու մասին: —

Նա, ասում էին, թալանում է քարւանները, գերի է տանում հարուստ վաճառականներին և մինչեւ միծ փրկանք չի առնում, բաց չի թողում:

Գիւղացիներին ոտքի է կանգնեցնում իրանց խաների և բէգերի դէմ, կոտորում և կոտորել է տալիս կալւածատէրերին ու տէրութեան կապարառուներին, և այսպէսով իր կողմն է գրաւում երկրագործ ժողովրդին, կոտորում է հարկահաններին և հաւաքած հարկերը բաժանում չբաւոր գիւղացիներին:

Շատ անգամ կարում է գիւղացոց յարաբերութիւնը քաղաքցոց հետ, ուտեստի պաշարը թանգացնում, և մինչև քաղաքներից մեծ վճար չի առնում, յարաբերութեան կապը չի արձակում:

Քրիստոնեաներին առանձին պաշտպանութիւն է ցոյց տալիս և նրանց պաշտպանութիւնը գտնում ամեն տեղ:

Որտեղ մը կարգէ դուրս քաջ տղամարդ կայ,

գնում է Քեօրօղլու դրօշակի տակ մտնում: Որտեղ մի փախստական և մահապարտ կայ, նրա հովանաւորութեանն ու պաշտպանութեանն է դիմում: Այսպէսով նա կազմակերպած խումբեր ունի երկրի բոլոր ամուր տեղերում: Բոլոր անմատելի բերդերին տիրելով՝ ամենի վրայ իր անունն է դրոշմել: Բոլոր խումբերն իրար հետ սերտ կապ ունին, և հարկաւոր գէպքերում միմեանց օգնութեան են հասնում:

Ամեն հաւատի ու ցեղի մարդ կայ նրա խմբի մէջ, բայց միանգամ այդ խմբի մէջ մանելով՝ ոչ մի հաւատի չեն ծառայում, ամենքն էլ միապէս դառնում են անհաւատ և ծաղրում ամեն հաւատ: Չեն ընդունում միայն այն մարդիկը, որոնք որ և է քաջութիւնով իրանց յայտնի չեն կացուցել, կամ որ և է գժւար յանձնարարութիւն և փորձ չեն կատարել: Ինքը պաշտելու չափ սիրում է ամեն մէկին և ամենի յիմար կամքը կատարում, նոյն իսկ իր կեանքը վտանգի տակ դնելով: Բոլոր սիրահարներին իրանց մուրազին է հասցնում, քերելով նրանց սիրոյ առարկան: Ինքն էլ ամեն մի բերդում մի առանձին սիրունի ունի: Իրանց սիրուհիները փակւած չեն պահւում նրանք պարտաւոր են զինավարժութեամբ պարապել, ձիավարութիւն գիտենալ և հարկաւոր գէպքերում քաջութեամբ կուել: Այս կերպով ահա նա հաւաքել է երկրի ամենազեղեցիկներին և ամենաքաջերին որոնք հմայւածի պէս անձնիրութիւն են ցոյց տալիս նրան, և անհաւատ լինելով՝ նրան միայն հաւատում ու սիրում:

Քեօրօղին ամենից շատ վեաս էր հասցնում՝  
Իրան աշխարհին։ Այդ ատելութիւնը ժառանգա-  
կան որ, հօրից որդուն անցած։ Բայց Քեօրօղլուն  
ժամանակակից Իրանի թագաւորը մի վեհանձն  
մարդ էր։ Նա երբ որ լսում էր Քեօրօղլու քա-  
ջութիւնը, մտքումն ասում էր. «Եթէ ես թագա-  
ւոր չը լինէի. ամենայն ուրախութեամբ Քեօրօղլու  
քաջերից մէկը կը դառնայի, նրա պէս աղաս  
կեանք կը վարէի»։ Այս պատճառով նա աչագին  
զօրքով, (մօտ երեսուն հազար հոգուց բաղկացած)  
ուղարկեց իր ամենից փորձառու զօրապետին—  
Բօլի բէգ անունով և պատուիրեց նրան, որ Քեօ-  
րօղլուն կալանաւորէ, պաշարելով այն բերդը,  
ուր որ նա կը լինի։ Սպանելու հրաման չը տւաւ,  
ընդհակառակը, ասեց, որ եթէ Քեօրօղլուն սպա-  
նես, քեզ կախաղան կը բարձրացնեմ։ Եթէ քաջ  
ես, նրան պէտք է բերես ինձ մօտ ողջ առողջ։

Իրանի թագաւորը չէր ուզում զրկւիլ Քեօ-  
րօղլու պէս մի անւանի հերոսից, և ուզում էր  
նրան իր մօտ տանել և նրանով յաղթել իր  
արտաքին թշնամիներին։ Բօլի-բէգը նախ պիտի  
աշխատէր զանազան խոստումներով Քեօրօղլուն  
հրաւիրել շահի մօտ։ իսկ եթէ այդ չը յաջողէր և  
միայն այն ժամանակ պիտի գործ դնէր իր ահա-  
գին բանակի ուժը։

Քեօրօղին այդ ժամանակ գտնւում էր մեր-  
երկրումը, որ Իրանի իշխանութեան տակն էր։  
Երբ էր այդ ժամանակը, յայտնի չէ, և ոչ տեղա-  
է յայտնի որոշակի։

Թագաւորի մտադրութիւնը Քեօրօղլու մասին  
թէպէտ անկեղծ էր, նա անշուշտ մեծ պատւի կը  
հասցէնէր Քեօրօղլուն, բայց Քեօրօղին աւելի լաւ  
էր համարում Հայաստանի հովասուն լեռներում  
աղատ աւազակ համարուիլ. քան թէ շահնշահի  
եռապարիսպ պալատում նոյն իսկ շահ լինել.  
ուր մնաց, որ ինչքան էլ մեծ իշխան լինէր,  
դարձեալ շահի ստրուկը պիտի համարւէր։ Լինել  
հապատակ, թէկ հազար ու մէկ շքանշանով դար-  
գարւած՝ ատելի էր բնութեան աղատ զաւակին։

Քեօրօղին սովորութիւն ունէր շատ անդամ  
ծպտած ման գալու։ Նստում էր մի էշի կամ  
ջորու վրայ, աշըզի հագուստով, (աշըզները ջոկ  
հագուստ ունէին հնումը), սազը մէջքից կախած,  
առանց որ և է զէնքի և գիւղէգիւղ թափառելով,  
զանազան տեղեկութիւններ էր հաւաքում, և ըստ  
այնմ իր զգուշութիւնը գործ դնում և անելիքն  
անում։ Մէկ անդամ էլ հէնց այսպէս ծպտած  
ժամանակ լսում է, որ Բօլի-բէգը եկել է մեծ  
զօրքով և բանակ է գրել թօնա գետի մօտ։ Եկել  
է ոչ իրրե զօրքով պատերազմ, այլ իրրե մի ցե-  
ղապետ իր ժողովրդով ամարանոց, իր հետ բերել  
է և իր կանանցը, բոլոր հարիւրապետներն ևս բե-  
րել են իրանց գերդաստանը, որով կազմել են մի  
թաթարական օրդու։ Իրանց հետ ունին նաև ոչ-  
խար, տաւար, ուզտեր և ամենայն ինչ։ Ի հարկէ  
այս աւելորդ բաներն այնքան շատ չէին, որ իսկոյն  
չիմացւէր, թէ սա մի խաչնարած ժողովրդի չւումն  
չէ մի տեղից միւս տեղ, այլ պատերազմական  
նպատակ ունեցող մի բանակ է։

— 10 —

Քեօրօղին, առանց երկար մտածելու, իր ջորին քշում է ուղիղ դէպի այդ բանակը, որ կը ու նրա որպիսութիւնը: Հէնց որ նրան տեսնում են, իբրև աշըզի, ամեն մէկն իր կողմն է քաշում և հրաւիրում: բայց Քեօրօղին ոչ մէկին չի լսում, քշում է ջորին և իջնում զօրապետի վրանի առջև: Բօլի-բէգը շատ ուրախանում է և հրամայում է նրան ցոյց տալ իր չնորհքը, զւարձացնել իր խաղերով, և եթէ գիտէ. Քեօրօղու խաղերիցն ասէ, Այս առաջարկութիւնից օգուտ քաղելով՝ Քեօրօղին ասում է հետեւեալ խաղը, մեղմացնելով իր ահեղ ձայնը, որ չը ճանաչւի:

Ո՞վ կայ շանակում իմ ժանօրներից,  
Շուտով իմ բաւերին մի րուր հասցրեի.  
Թող յարձակրին անեն կրդմից յալքերով:  
Ինձ էլ մեկ վահան ու մի րուր հասցրեի.

Հասկի, շուտով հասկի,  
Մի րուր հասցրեի:

Ասկցի՞ եկել են դեղնած բուտանչի,  
Արխացրով փարեն ուսած բուլողչի,  
Սուր չը տեսած, բանից փախած փինաչի,  
Եկի այս յուղաներին առողջացրեի.

Հասկի, շուտով հասկի,  
Մի րուր հասցրեի:

Չեմ ճանաչում արծիւն ազուրի շարում,  
Չորս կրդմից ծաղրում են ո կյանարում,

Քեօրօղուն բոներու բակարդ են շարում,  
Եկի սրանց զվարում մի յուղ մշցրեի.  
Հասկի, շուտով հասկի,  
Մի լուր հասցրեի:

Քեօրօղու խաղի միտքը լաւ հասկացան նրա բարեկամ լրտեսները և շտապեցին լուր տանելու նրա քաջերին: Բայց Բօլի-բէգն ևս կասկածի եկաւ, թէ սա ինքը չէ արդեօք Քեօրօղին, և հարցրեց.

— Աչըզ, այդ խաղը հ՞րբ է ասել Քեօրօղին:  
Քեօրօղին պատասխանեց.

— Մի՞թէ քեզի յայտնի չէ, իսան, որ փաղի-շահը քանիցս անգամ ուղեցել է կալանաւորել Քեօրօղուն. մէկ անգամ էլ Բօլի-բէգին է ուղարկում մեծ զօրքով: Քեօրօղին աշըզի հագուստով պատահմամբ ընկնում է նրա բանակը, ուր և ասում է այս խաղը, որով իմաց է տալիս իր քաջերին, թէ ուր է ընկել ինքը, և նրանք էլ գալիս են ազատում:

— Այդ Բօլի-բէգը չի լինում, աշըզ, այն գուցէ Վէլի բէգը լինի եղած: Բայց դու այս ասա, ինչո՞վ ես հաստատում, որ դու ինքըդ չես Քեօրօղին, որովհետեւ ինքըդ քեզ մատնում ես, խոստվանելով, որ Քեօրօղին երբեմն ծպտելով՝ աշըզութիւն էր անում:

— Իսան, հէնց այդպէս էլ հարցրել է Բօլին,  
և տեսէք՝ Քեօրօղին ի՞նչ է պատասխանել —

Ինչով ուզես, Բօյի, ևս երդում կուտեմ,  
Որ ևս մի խեղա հայ եմ ևս ոչ Քեօրողին՝  
Երկիմք, գետին, Ասւած վկայ կը կանչեմ  
Որ ևս մի խեղա հայ եմ ևս ոչ Քեօրողին.

Հայ եմ, հայ, հարսայ,  
Հայ եմ, ուղիղ հայ:

Հայի ձեռին դու չես տեսնի սուր ու բուր,  
Այդ բանն արգելի է մեր մեծն Այսաւուր,  
Թէկրու զ զիսիս բարիս հազար բուժու մուր,  
Ես մի անրախ հայ եմ եւ ոչ Քեօրողին.

Հայ եմ, հայ, հարսայ,  
Հայ եմ, ուղիղ հայ.

Երե բուրը ձեռին Քեօրողուն տեսնես,  
Հարաւա՛ ինձ, Բօյի, դու կը սարսափես,  
Թիսկէ սազ կը ունի, երգում է ինձ պիս,  
Բայց ևս մի խեղա հայ եմ ևս ոչ Քեօրողին,  
Հայ եմ, հայ, հարսայ,  
Հայ եմ, ու ուղիղ հայ:

— Սպասիր, աշըդ, ասում է Բօլին, այդ իմ  
հարցի պատասխանը չէր: Ես իսկական Բօլի-թէգն-  
եմ և ոչ Ալին կամ Վէլին, և հիմա ուղղակի հար-  
ցնում եմ քեզ: Ինչո՞վ ես ապացուցանում, որ դու  
Քեօրողին չես:

— Խան, ես այդպէս չը հասկացայ, պատաս-  
խանեց Քեօրողին, ես հէնց իմացայ, թէ դու  
Բօլի-թէգի հարցումը արւիր, ես էլ Քեօրողիու-

պատասխանն ասեցի: Եթէ ինձ վրայ կասկած ու-  
նիս, որ մտքովս անցնել չէր կարող, ուրեմն լսիր  
իմ պատասխանը:

Քեօրողին ուղում էր միայն զբաղեցնել Բօլի-  
թէգին, մինչև կը հասնեն իր քաջերը, բայց և  
այնպէս, նա այլևս չի ուղում իրան նւաստացնել  
և յայտնում է, թէկ մութ կերպով, որ ինքն է  
Քեօրողին և ունի հայկական ծագումն:

Ես մի Զարայի եմ, անուն է Մուշան,  
Հոր անունն է Խոր\*, մօրպ՝ Խորիշան.  
Արևեսով աշրդ եմ, ինչպէս տեսնում էի.  
Որ ևս Քեօրողին չեմ, անա ձեզ նշան:

Կանցում եմ նշան նշան,  
Պատմում եմ նշան նշան,  
Մարդի ունի մարդու պատեր,  
Շունու կը ունի շուն նշան:

Երե իրաւ ևս լինի Քեօրողին,  
Խըրս լիներ երա բուրը, երա ձին,  
Այն ժամանակ կը տեսնիր, Բօյի-թէգ.  
Որ Քեօրողուց պակաս յաջ չի հօրողին:

\* Աւանդութիւն կայ, որ Խուշանի հայըը քեօր  
չի եղել, որ կը նշանակէ կոյք, այլ խոր կամ խոռ, որ  
մի հայ է եղել Խորխոռունեաց ցեղից, բայց աւաղակ  
զառնալով՝ խառնւել է Ձաւալի ասւած քրդական  
ցեղի հետ և համարւել քուրդ կամ թուրքէն: Այդ ժա-  
մանակ Ահա նրա խոռ անունը աղաւաղել գառել է  
քեօր և յետոյ էլ կարծւել է, թէ նա կոյք է եղել...

Չեմ բայցը նում, խոր եմ խոր,  
Իմ քշնաւուն խորեմ խոր,  
Աղիւրի պիս բարսկ եմ,  
Ծովի նման խոր եմ. խոր:

Քեօրովին և իմ սիրելին, իմ խանը,  
Ես երա երգիչ եմ, ևս իմ պաշտպանը,  
Նրա ամեղ ձայնը միայն շերով՝  
Դոդում, զարհուրում և ողջ Պարսկաստանը:

Վախ յունիմ մահ ու ամից,  
Ազատ եմ մասն ամից,  
Մասդիմ մասն յեն մեռնում,  
Այլ միայն մասն ամից:

Խօրովին եմ, ոչ մի բանից ահ յունիմ,  
Ինիս մեծ իշխան եմ, բեր զան յունիմ.  
Թող ողջ լինի միայն իմ զօջ Քեօրովին.  
Սուրբան ո խառերից ոչ մի շան յունիմ.

Չեմ սիրել խան ու սուրբան,  
Կամեմ իշխան ու սուրբան,  
Խան կայ մի խան չարժի,  
Սուրբան կայ ան ու ու ու բան:

Այս երդից յետոյ Բօլի-բէզն ասում է.

— Աշըզ, իրաւ որ դու քուրդ ես ու քրդա-  
վարի էլ խաբում ես ինձ, եթէ դու Քեօրովին  
չես, այլ Խօրովին, այդ ինձ համար միւսոյն է,

Կրկուսդ էլ վտանգաւոր էք: Ես Խօրօվլուն կը  
բռնեմ, թող Քեօրօվլին զայ նրան աղատէ:

Այս ասելուց յետոյ՝ Քեօրօվլու ոտները կապել  
է տալիս, ուզում է կապել տալ և կռները, բայց  
Քեօրօվլին ինդրում է, որ կռներն աղատ թողնեն  
ու սալը ձեռքիցը չառնեն ասելով

— Իսա՞ն, այս շատ մեծ պատիւ է, որ ինձ  
տալիս էք. ասած է՝ « մէկ օրւայ խանութիւնն էլ  
է խանութիւն ». դուք մէկ օրով ինձ Քեօրօվլի-  
էք շինում, թոյլ տէք ուրեմն Քեօրօվլու խաղե-  
րիցն ասեմ ձեզ համար, մինչեւ կը բռնէք խսկական  
Քեօրօվլուն և խեղձ աշըզիս կազատէք:

Եւ Քեօրօվլին սկսեց բուն Քեօրօվլու ահեղ  
ձայնով հետեւեալ խաղը:

Քօյի, նամազդ արա, մելիքը յաւի,  
Հրես որտեղ որ կ' յաջեր կը զան.  
Դազալըդ շինել տուր, պատանըդ կարի.  
Հրես հոգիդ տունոյ դիւերս կը զան.  
Ելիկ, յաջեր, ելիկ,  
կը մի ուշանափ:

Մեկ կայ հազար արժի, հազար կայ ոչ մին,  
Ամբողջ բանակրվդ չարժես իմ մկին.  
Գերանիդիով, բովուզներով ահազին,  
Հրես կացնով չարդոյ զիմերս կը զան.  
Ելիկ, յաջեր, ելիկ,  
կը մի ուշանափ:

— 16 —

Քեօրօղուս արուն և անստիկ Սասուն,  
Հովհաններիս թիւն և միջեւ յառասուն.  
Լայիշ զրուխները, ով դրէ անստուն,  
Հրիւ ձեզ պատասող վագրերը կը զան.  
Եկիք, բացեր, եկիք,  
Ել մի ուշանավ:

Քեօրօղուս ահեղ ծայնից ոչ միայն մարդիկ  
սարսափեցին, այլ և բոլոր անասունները, որոնք  
կարծեցին թէ առիւծ է մանչում: Սաստիկ վախե-  
ցաւ և ինքը Բօլի-բէզը, բայց ինքն իրան անհոգ  
ձեւացրեց, չուղենալով հաւատալ, թէ նա ինքն է  
Քեօրօղին: Այս միջոցին Քեօրօղուս աչքը պատահ-  
մամբ ընկաւ դէպի վարագոյրը, (որի ետեւը ծած-  
կւած էին Բօլի-բէզի կանայքը և ծակուծուկերից  
նայում էին Քեօրօղուն ու համում) և մէկի  
սիրունիկ աչքերը տեսնելով, մօռացաւ իր քաջե-  
րին, և սկսեց իր երգը դէպի նոյն գեղեցկուհին  
դարձնել.

Ամպերում բայներած, իմ սիրուն արեւ,  
Մեկ փայլում ես, մեկ հէ ծածկում խաւարում  
Գանդակի մեջ դրած ախակի նձան.  
Մեկ երգում ես, մեկ հէ դուռ ու ժիրում.  
Ինչնո՞ւ, հոգիս, ինչնո՞ւ,  
Ինչնո՞ւ ևս ժիրում:

Արեւագուրկ ծաղիկ, անցուր բալիսնար,  
Վարդ, դր կուզես քազ մի բիւրիւլ սիրանար.


Ազաւ մարդի քեզ անում և կցանար,  
Գիշ որ դու իրան սրույլ չես սիրում:  
Ինչնո՞ւ, հոգիս, ինչնո՞ւ,  
Ինչնո՞ւ չես սիրում:

Քեօրօղուս պէս մի յաջի եւ դր արծան,  
Որ դրան դաւձեն այդ կեանիլը դաման,  
Դու կը լինիս իմ սիրունիս անրածան,  
Այժմին իսկ իմ հոգիս քեզ եւ նրիխում.  
Հաւասա՛ ինձ, հոգիս,  
Քեզ եւ նրիխում:

— Լոի՛ր, յանդուգն, բզաւեց Բօլի-բէզը  
խանդոսութիւնից կատաղած և հրամայեց կապո-  
տիկ Քեօրօղուս կռները, Քեօրօղին ոչ մի ընդդի-  
տութիւն ցոյց չը տւաւ: Նա այդ բոլորը մի կա-  
տակ էր համարում, իսկ նրանց թոկերն իր համար  
մի սարդի ոստայն:

Քեօրօղուս ձեռք ու ոտքը կապոտելուց յե-  
տոյ, մի թոկ էլ վղիցը կապեցին և Բօլի-բէզի  
հրամանով տարան թօնա գետի ափը, որ նրան  
ընկղմեն գետի մէջ առանց խեղղելու, այլ այն-  
քան ընկղմեն և հանեն, մինչև ուժից ընկնի իս-  
պան և ուղիղը խոստովանի, եթէ ինքը ճշմարիտ  
Քեօրօղին է:

Գետափին ձիաներ կային օրուգ տւած: Հէնց  
որ մօտեցաւ այդ ձիաներին, թոկերը կտրտեց, իր  
տանողներին քարերի պէս չպոտեց գետի մէջ,  
իսկ ինքը մի ոստիւնով թռաւ մի լաւ ձիու վրայ  
և անթամբ ու անսանձ ձիու գլուխը երկու ձեռ-



քով իր ուղած կողմն ուղղելով, դուրս պրծաւ բանակից։ Այս անակնակալ դէպքի վրայ ամենքն էլ շփոթւեցին ու շնկւեցին, բայց մէկ էլ որ տեսան հեռւից մի թանձր փոշի բարձրացած վազում է դէպի իրանց այնպէս արագ, որ կարծես նրան մղում էր մի անեղ փոթորիկ, բոլորովին սարսափի մէջ ընկան։

Այդ թողն ու դումանը բարձրացրել էին Քեօրողլու քաջերի ձիաները, որոնք դալիս էին սրարշաւ և նրանց արոփիւնի ձայնը արդէն մինչև բանակն էր համուռմ։ Բօլի-բէգը, որ Քեօրողլու կողմից յարձակւելու յոյս չունէր բոլորովին, և ով կը համարձակւէր մի փոքրիկ խմբով ամբողջ բանակի վրայ յարձակւել, չուտով պատրաստւեց դիմադրելու։ Բայց ինչ օգուտ, Եկողները հազարներից ընտրւած մի մի դիւցազն էին, և իրանց քաջութեան համեմատ մի-մի սարսափելի մականուն ունէին շքանշանի տեղ ստացած ինչպէս՝ Վարազաթուր, Գայլաբերան, Փղակնձիթ, Վագրաճանգ, Առիւծաթաթ, Անսառան, Զարհուրելի, Ալլանբալա (առիւծի ձագ), Քեարքեադան (միեղջերու), Ազրայիլ (չար հրեշտակ), Դրիսազան կամ Դրիսուան (քառասունին ջարդող)։ Քեօրողլին չունէր ոչ մի մականուն, բայց երբեմն անւանւում էր Հաստընչացք և Անեղածայն։

Քեօրողլին արդէն նստել էր Դռաթի վրայ և ձեռքն առել իր վահանն ու թուրը։ Նա դալիս էր ամենի առջելը։ Բանակին մօտեցան թէ չէ՝ այնպէս յարձակւեցին, ինչպէս միր հնձողները հասած արաի վրայ, և սկսեցին հնձել անինայ։

Զիաւորները հնձում էին, իսկ ձիաները ոտնատակ տալիս, կասում։ Հնար չը կար դիմադրելու, զօրքը երեսը շրջեց և փախուստ տւաւ։ Փախստ Բօլի-բէգը, բայց նրան շրջապատեցին և կան Բօլի-բէգին։ Քեօրողլին ազատեց նրան, միայն լանաւորեցին։ Քեօրողլին ազատեց նրան, միայն կանայքն առաւ ձեռիցը և բաժանեց իր քաջերի մէջ վիճակով։ Ինքը շառաւ ոչ մէկին, որ իր Նիգեարի սիրաը չը պակսեցնէ, Բացի Նիգեարից, որին սիրում էր բոլոր սրտով, ուրիշ կին չունէր, թէպէտ կարծում էին, որ նա շատ կանայք է պահում։

Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ երբ որ վերադարձաւ տուն, Քեօրողլին մի փառաւոր վերադարձաւ տուաւ, երգերով պատմեց Նիգեարին բոխնջոյք տւաւ, երգերով պատմեց Նիգեարին բոխնջոյք տւաւ, անուն անուն գովեց իր քաջերին, մէկ մէկ թւելով ամեն մէկի արածը, Նիգեարն էլ ի նշան չնորհակալութեան մի ահազին բաժանկ մէլում էր գինով և իր ձեռքով տալիս ամեն մէլում էր գինով և իր ձեռքով տալիս ամեն մէկին, Գերի ընկած սիրուն տրկիններն էլ շատ ուրախ էին, որ գերւելով, աղատուել են իսկական բարութիւնից, և փոխանակ ամենքը միասին մի վատոյժ մարդ ունենալու, հիմա ամեն մէկը միայնակ կունենայ մի հերոս։

Մեր քաջերն իրանց ինչոյքը վերջացրին հետեւալ պարզ երգով, որ երգեցին ամենքը միաւ տեղ մի ուրախ եղանակով—

Հայրը պատերազմ զնաց,  
Որդին ծածուի հետեւեց.  
Չոր զիլին սաւր պրապլղաց.  
Արդին հրան սպատեց:  
Ոյ բա՛խս, դրախս.  
Դրա - բա - բախս:

Հայրը որդուն զիւկն առաւ,  
Երա ամեցից համբուրեց.  
Ուղին բուրը ձեռքն առաւ,  
Հօր բջնամուն խորտակեց:  
Այ բա՛խս, դրա՛խս,  
Դրա - րա - րա՛խս:

Մայրը շատ ախտուում էր.  
(Որդին էր դեռ պատանեալ )  
Երա համար հիւսում էր  
Թարթ ուսերից մի պամի:  
Այ բա՛խս, դրա՛խս,  
Դրա - րա - րա - րա՛խս:

Որդին եկաւ յաղրական.  
Հետն էլ բերաւ դեռահաս  
(Իր մօր համար օգևական )  
Մի զեղեցիկ նորահարա:  
Այ բա՛խս, դրա՛խս,  
Դրա - րա - րա - րա՛խս:

Մայրը եմաց ձըւաձեղ,  
Ուտեցրեց երկուսին.  
Յեսոյ շինեյ փափուկ տեղ.  
Պառիկյեց միսային:  
Այ բա՛խս, դրա՛խս,  
Դրա - րա - րա - րա՛խս:

## Վ Ե Ր Զ Ա Մ Ա Ն

Աշըղները՝ երբ որ պատմում են այս արկածը  
և վերջացնում. սովորաբար մի խրատական կամ  
ծիծաղաշարժ իրաղ էլ իրանցից են ասում կամ  
նոյն իսկ Քեզոզլու ասածներից ուրիշ դէպքումն  
իթրև օրինակ՝ բերենք հետևեալ իրաղը.

Ով որ ձուկ բոնել չը զիտէ,  
Կարրի պատին ինչ կիմանայ.  
Խըխունցներից զոհ եղողը  
Թարթի պատին ինչ կիմանայ.  
Ո՞վ է տեսէ փայտից մաշա,<sup>»</sup>  
Կամ բօշայից դառած փաշա\*:

Ով սիրում է փրած հինը,  
Զի հաւկանալ նորի զինը.  
Քուչին ընկած բերեւ կինը  
Մարդի պատին ինչ կիմանայ:

Քուրդը չի սովորի փեշակ,  
Պղպեղը չի դառնայ մեխակ,  
Ազուար որ դառնայ սոխակ,  
Վարդի պատին ինչ կիմանայ:

Սուս չի Քեօրօղու ասածը,  
Նրա երգածն ու խօսածը,  
Փարասևերում մեծայածը  
Զարդի պատին ինչ կիմանայ:

Ախրաղը չեր հաւանում սոխակին,  
— Կուզեն, անց հարցնենք առանսկին.  
— Ո՛չ, ո՛չ, պատախանեց սոխակը,  
Ես աւելի հաւան եմ քո աաշակին . . .

\* Ամեն անալի բջում, ըստ Կամի, լաւելացնում են  
այսպիսի ասածներ:

## ՔԵՈՐԾՎԱՆ ԶԱՂԱՑՊԱՆ

Մէկ անգամ Քերօղլու ծառաներից մէկը՝  
Քաջալ-Համզան՝ փախել էր: Քերօղլին հեծաւ իր  
հոչակաւոր Դռաթը, և ընկաւ Համզայի ետեից  
որ բռնէ նրան և պատժէ:

Համգան դեռ չառ չէր հեռացել, Նա յետ  
մտիկ արւաւ ու տեսաւ որ հեռւից փոշի է բար-  
ձրանում, իսկոյն գլխի ընկաւ, որ Դռաթի բարձ-  
րացրած փոշին է այն, ուր որ է՝ Քեօրգիին պիտի  
հասնէ և բռնէ նրան։ Հսար չըկար փախչելու։  
Նրա բախտից նոյն տեղը մի ջաղաց կար, վազեց  
մտաւ ջաղացը, երես-մերեսը ալըրաթաթախ  
արաւ, շորերն էլ նոյնպէս, և այսպէս կերպարա-  
նափոխուած՝ դուրս եկաւ կանգնեց ջաղացի  
դռանը։

Քիորօղլին ձին քշած եկաւ, և Համզային  
պատահելով՝ հարցրեց, թէ այս նշանով մարդ-  
չանգաւ արդեօք:

— ինչպէս չէ, պատասխանեց Համզան. քո  
ասած նշաններով մի մարդ մտաւ այս բռպէիս իմ  
թուական:

— Ուրեմն բռնիր ձիս, ասաց Քհօրօղին, և  
իցաւ ձիուցը:

Զի՞ն թողեց Համբայի ձեռքին, իսկ ինքը մը-  
տաւ ջաղացը, տեսաւ որ այնտեղ ոչ ոք չըկայ,  
դուրս եկաւ որ բարկանայ ջաղացպանի վրայ.  
բայց կեզծ ջաղացպանը արդէն Դաշթի վրայ էր:

— Անպիտա՞ն, ինձ խարեցիր՝ բաւկասո՞չ :  
Համարձակեցար հեծնել Նաև իմ Դռաթի՞ս, ասաց  
Քեօրոզվին բարկութեամբ :

— Շատ մի խօսի՞ր, պատասխանեց Համզան,  
— այժմ Քեօրօղին ես եմ, իսկ դու գնա՛ ջա-  
ղացանութիւն արա. նայիր միայն, որ լա՛ւ  
աղաս, կորկոս չանես: Այս ասելով Դռաթի գր-  
լուխը շրջեց ստահակ ծառան, և այսօր ես ան-  
յայտացել, թէ էզուց . . .

Քեօրողվն նոր գլխի ընկաւ, որ փախչողը  
Համզան էր, բայց էլ ի՞նչ կարող էր անել: Նա  
քա՞ն քա՞ն ծիծաղելով իր միամտութեան վրայ,  
գլուխը թափ տրւաւ և մտաւ ջաղացը:

Քեօրօղին սովորութիւն չունէր յուսահատ-  
ւելու. այս տեսակ դէպքերը նրա միշտ ուրախ ու  
զւարթ տրամադրութիւնը չէին խանգարում: Նա  
տեսաւ որ ամբարը լիքն է ցարենով, բայց ջա-  
ղացնան ուրիշ տեղ է գնացել, ջուրը կապեց  
նաւի մէջ, բան ձգեց աղօրիքը: Երբ որ չախ-  
չաին սկսեց իր ներդաշնակ չըխչըխկոցը, Քեօրօղ-  
ին նրան սազի տեղ համարեց և սկսեց երդել հե-  
տեեալ երգը—

Այ Քեօրողի, շան Քեօրողի,  
Այ Քեօրողի, շան Քեօրողի,  
Քեզ խարթը Համբուլ Քեօրողի, հայ, հայ, հայ։  
Բայց որ դպնել ես ցաղացվան։  
Կանչէիր բող զայ զան Քեօրողի, շան,  
Զան Քեօրողի, շան,  
Զան Քեօրողի։

— 24 —

Մարդու բախտն իշ ահա այսպիս,  
Պարտում է ջաղացի պիս,  
Միկ օր անելի վիշտավ ես,  
Միւս օր ջաղացպան Քեօրողի:

LԲայց դու իշի Քեօրողին ես,  
Ժողովրդի սիրելին ես.  
Թիկուզ ջաղացպան իշ լինես,  
Քեզ պատիւ կրտա՞ն Քեօրողի:

Թիեւ Դուքից գրկած,  
Բայց դուր ունիս վրայ կապած.  
Համբան սրուկ, բոկից փախած,  
Իսկ դու ազա խան Քեօրողի:

Մօըրդ կամչյու հրամաներիդ,  
Հաւատարիւ կրիմելերիդ,  
Թող զան զնելեն փախած գերիդ,  
Չրկուչյի Համբան, Քեօրողի:

Քեօրօղլու ձայնը շատ անեղ էր. այս երգը  
երգելուց յետոյ՝ բարձրացաւ ջաղացի տանիքի  
վըրայ և այնպէս որոտաց. որ նրա ձայնը սար  
ու ձոր դրմբացնելով՝ հասաւ մինչև Զամիթէլ.  
ուր գտնուում էր Քեօրօղլու անմատչելի բերգը:  
Քեօրօղլու կինը, Նիգեար խանումը, որ շատ  
ուուր լսողութիւն ունէր, ամենից շուտ իմացաւ  
որ իր ամուսինը մի անակնկալ փորձանքի է հան-  
դիպել: Խոկոյն իմաց տւաւ քաջերին, որոնք մի  
ակնթարթում դուրս թափւեցին բերգից և հա-  
սան իրանց խմբապետին: Դրանց մէջ նշանաւոր  
էին Դամիւրջօղլին, Խոաբ Ալին և Գգիր-օղլի

Մուստաֆա-բէգը: Երբ որ զնացին տեսան Քեօր-  
օղլուն ջաղացպանութիւն անելիս, Դուաթը խւել  
տըւած, շատ ծիծաղեցին, և Դամիւրջօղլին մի  
երգով շնորհաւորեց Քեօրօղլու նոր արհեստը և  
նոր առուտուրը: (Որովհետեւ Հազման Դուաթը  
փախցնելով՝ նրա փոխարէն իր ջորին թողել էր  
նրա մօտ):  
Թող երգէ Դամիւրջօղլին, տեսնենք ի՞նչ է  
երգում և ինչ ձեռով:

Նոր վաճառական ես դառել,  
Առըսուրը շնորհաւոր,  
Զին տրւել ես, ցորին առել,  
Ասրուրը շնորհաւոր,  
Զին տրւել ես, ցորին առել,  
Ասրուրը շնորհաւոր, հոգին,  
Առըսուրը շնորհաւոր:

Այսուրը ցորուն կրարձեն,  
Բազար կը տանեն կրծախեն,  
Դեղին ուկից կը հաւաքեն,  
Առըսուրը շնորհաւոր:  
Քեզ կամեն՝ ուստա Առուշան, \*  
Երբ կրիմին յաւ ջաղացպան,  
Գըրուխ-զըրուխ շահադ \*\* կը տան,  
Առըսուրը շնորհաւոր:

Դամիւրջօղլի, շատ յաւ կամեն,  
Որ Քեօրօղլուն զովաբանեն,  
Ասեւ՝ յաւ վաճառական ես,  
Առըսուրը շնորհաւոր...

\* Քեօրօղլու իսկական անունը Ռուշան է:  
\*\* Շահադ է ասւում աղալու համար տըւած վարձը,  
որ մի յայտնի չափով տրում է աղացւող հատիկնե-  
րեց:

Դամիւրջօղլին այսպէս երկար կը շարունակէր,  
բայց Քհօրօղլին նրան միջահատում է ասելով՝  
կատակի ժամանակ չէ, և ինքն է սկսում երգել  
այլ եղանակով և ահեղ ձայնով.

✓ Ծառաս փախել է մինչ Արարդսան։  
Ծուս արկ, ուր որ է, փնտեցի թերի,  
Ծընին զարկերով, կապէի կոները,  
Արար ձիու վլրայ բարձեցի թերի։  
Ծընին զարկերով, կապէի կոները,  
Արար ձիու վլրայ բարձեցի թերի։  
Արի՛, հոգին, արի՛, արի՛, անուշեկ...

Իր զործած յանցանիը դրէի իր վլզին.  
Որ յասէն անմեղ իր, իգուր պատեցին.  
Մորքեցի եզան պէս, մերքեցի կաշին,  
Միար մաս-մաս արկ, շարդեցի թերի։

Քեօրողին եմ, ևս յեւ մակ ցւողացան,  
Իմ Ղուարին երրէի չի սիրի Համզան,  
Գետնի տակն ել շինի. հանեցեցի նրան,  
Չիու պոչից կտպած՝ յաշ ըրիի թերի։

Ինչ ասել կուզի, որ Քհօրօղլու հրամանը  
չուտափոյթ կատարւեց, Քհօրօղլուն պատահած  
այս արկածը պատմւում է և ուրիշ ձևով։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. Քեօրողլու բոլոր երգերը  
երեք եղանակ ունին միայն. Այսեղ բերած երեք  
երգերից ամեն մեկը ջոկ եղանակ ունի, եւ այդ  
երեւում է երգերի ձեւից եւ տողերի շափից. Եր-  
գելիս՝ առաջին տան կազմութիւնը պէտք է տալ եւ  
միւս սներին։

## ՔԵՕՐՈՂԼՈՒ ԹՈՒՐԸ

(Ա Խ Ս Կ Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն)

Քհօրօղլին դեռ եւս տամարչորս տարեկան մի  
պատանի՝ հորթարած է լինում, Մէկ անգամ մի  
փախուստ տառող հորթի ետևից քար է գցում, որ  
յետ դարձնէ. քարը դիսում է հորթին և գըն-  
դակի պէս միջովի անցնում։ Հորթը սատկում է,  
իսկ նրա տէրը պահանջում է իր ապրանքի գինը:  
Քհօրօղլու հայրը. որ թէպէտ կուրացած, բայց  
շատ փորձառու մարդ է լինում, ասում է որդուն։

— Որդի, քաս չունի, մենք կը վճարենք  
հորթի գինը, եթէ ինձ կը հասցնես այն հորթաս-  
պան քարը։ Այն քարը մի հորթից շատ աւելի  
կ'արժէ։

Որդին բերում է քարը և տալիս հօրը։  
Հայրը չօշափում է քարը և ծանր ու թեթև  
անելով՝ նկատում է, որ քարը իր ծաւալի համե-  
մատութեամբ շատ ծանր է։

— Միթէ այս քարը չի պապում, — հարցը-  
նում է որդուն։

— Այո՛, հայր, պատասխանում է որդին։  
«Աս կայծակ է», ասում է ծերունին իր  
մտքումը. բայց որդուց գաղտնի է պահում այդ։  
(Այն ժամանակները մթնոլորտից վայր ընկած մե-  
տաղախառն քարերը համարւում էին երկնքից վայր  
ընկած կայծակ)։

Ծերունին վերցնում է այդ քարը և գնում է մի ուրիշ զիւղ, որտեղ թուր չինող լաւ վարպետներն են լինում, որ նորագիւտ մետաղից մի թուր չինել տայ: Թուրը չինել տալուց առաջ, սոյն կտորից մի բիզ է չինել տալիս և պահում մօտը:

Վարպետները շատ գեւարութեամբ են կարողանում թուրը չինել, և երբ որ վերջացնում են, սկսում են փորձել նրա յատկութիւնը: Խփում են գերանի, քարի, երկաթի, բոլորն էլ կտրատում է պանրի պէս:

Այս որ տեսնում են վարպետները, մտածում են որ թուրը սեփականեն և նրա տեղ մի հասարակ թուր տան: Կոյր ծերունին որ գալիս է թուրն ստանալու, նրան մի ուրիշ թուր են տալիս: Ծերունին սկսում է շօշափել, փորձում է ճկունութիւնը, տեսնում է, որ պէտք եղածի չափ չի ճկում, գրպանից հանում է բիզը որ այնպէս է ծակում թուրը և անցնում միևնույն կողմը, ինչպէս ասեղը շորի միջով:

— Այս իմ թուրը չէ, ասում է, — տւեք իմ թուրը:

Վարպետները տեսնում են որ կոյրը վաղօրօք իր զգուշութիւնը բանեցրել է, թրի կտորից բիզ շինել տալով, տալիս են իսկական թուրը: Ծերունին փորձում է բզովը, գտնում է անմատչելի: Փորձում է ճկունութիւնը, գտնում է այնքան ճկուն, որ կարող է կլորել և դնել ծոցումը:

Այս է ահա իմ թուրը, ասում է և շինելու վարձը վճարում:

Երբոր թուրը իր ձեռքով դնում է պատե ոնի մէջ, նա այնպէս է ամբանում, որ էլ հանել չէր կարող, եթէ ուզենար, բայց այդ չի իմանում ինքը: Այդ խորամանկութիւնը բանեցրել էին վարպետները, որ ճանապարհին ձեռքիցը խլեն իրեւ անծանօթ աւազակներ:

Ծերունին ճանապարհ ընկնում է: Ճանապի կիսումը վարպետները համում են ետևիցը և ուզում են թուրը խլել: Ծերունին ուզում է պաշտպանել, ուզում է թուրը պատեանից հանել, դուրս չի գալիս:

— Է՞ն, վնաս չունի, թող դուրս չըգայ, ասում է ծերունին. — «Եթէ սա իմ թուրն է, պատեանովն էլ կը կտրի»:

Այս ասելով՝ վրայ է բերում թուրը պատեանով, և երկուսի էլ գլուխը թոցնում է:

Այդ ժամանակները դեռ վառողը չէր զբանաւծ. Քաջերի սահմանը իրանց թուրն էր: Երբ որ ծերունու որդին նուշանը հասունացաւ և յայտնի դարձաւ Քեօրօզի (կոյրի որդի) անունով, և հօր պատրաստած թրին տիրացաւ, նա ոչ միայն շատ լաւ հասկացաւ նրա յարդը, այլ այնպէս սիրահարւեց վրան, որ վերջը մի երգով գովարանեց նրան, ինչպէս և իր Ղոաթին:

Ահա այդ երգը:

Իմ աչիխ րյու, իմ հողիխ, րուր,

Դու իմ անզին արեազ մայուր, րուր.

Չը կայ ոչինչ աշխարհումն

Որ եկ համար լինի անուր, րուր...

Թուր, րուր, րուր.

Իմ սիրական րուր:

Քո մեջն է իմ ուժն ու հոգին,  
Դու ես շունչ տալիս իմ կեանիքին, բն' ւ.  
Առիւծը դատուու է արին,  
Երբ շողում ես դու իմ ձեսքին, բն' ւ.  
Թն' ւ, բն' ւ, բն' ւ,  
Իմ զովական բն' ւ:


Դու ես իմ Տիրն, իմ պահող,  
Իմ մուրազին հասցենող, բն' ւ.  
Աննենան Նիզհար յանենամին  
Դու եղաւ ինձ մօս թերողը, բն' ւ.  
Թն' ւ, բն' ւ, բն' ւ,  
Իմ պատական բն' ւ...

Քեզ եմ պաշտում, քեզ եմ սյօնում,  
Գոհաւաներով քեզ զարդառում, բն' ւ.  
Մըսի բողոք խորհուրդներ  
Քեզ եմ միայն յահանարարութ, բն' ւ.  
Թն' ւ, բն' ւ, բն' ւ,  
Իմ ամենամաս բն' ւ...

Խեղա Քհօրօղին յենչ կանիփ,  
Երի քեզանից զ-կրիփ, բն' ւ.  
Սազը ձեռին արտասւերով  
Քեզ մօայն, քեզ կը վիսրիփ, բն' ւ.  
Թն' ւ, բն' ւ, բն' ւ,  
Իմ զովական բն' ւ:







ՀՀ Ազգային գրադարան



NL0329659

18.724